



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի  
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման  
ապահովում» ծրագիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Արմավիրի մարզի Վաղարշապատի Զորավար  
Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց  
Թեմա՝ Քննադատական մտածողության զարգացումը  
պատմության դասին:

Վերապատրաստող, մենթոր՝ Փիրուզա Սարգսյան

Ուսուցիչ՝ Նունե Հարությունյան

Վաղարշապատ 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	3
2. Թեմա 1 Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը.....	5
3. Թեմա 2 Քննադատական մտածողության տեխնոլոգիայում կիրառվող մեթոդները պատմության դասին .....	8
4. Քննադատական մտածողության դասի նմուշ օրինակ .....	15
5. Եզրակացություն .....	20
6. Գրականություն .....	22

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակության զարգացման ներկա փուլը բնութագրվում է անհատի զարգացման մակարդակի պահանջների աճով: Կրթության արդիականացման հայեցակարգում խնդիրներից մեկը կրիտիկական, ոչ ստանդարտ մտածողությամբ երիտասարդի ձևավորումն է, որը կարող է հավասարակշռված որոշումներ գտնել՝ հիմնվելով շրջապատող աշխարհի անկախ ուսումնասիրության վրա: Ուսուցչի աշխատանքն ուղղված է նոր մտածողության տեր մարդկանց ձևավորելուն, նախաձեռնող և շփվող, ստեղծագործող մարդկանց: Անհատներ, ովքեր ի վիճակի են ինքնուրույն որոշումներ կայացնել և պաշտպանել իրենց դիրքերը, բարելավել իրենց կրթությունը և ի վիճակի են ինքնուրույն կողմնորոշվել արագ փոփոխվող կյանքի իրավիճակում: Այս ամենը կարող են իրականացվել աշակերտի ակտիվ գործունեության պայմաններում, երբ ուսուցիչը կիրառում է դասավանդման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ: Այս խնդիրների լուծմանը օգնելու և դպրոցականների ինտելեկտուալ կարողությունների զարգացմանը առավելագույնս խթանող պայմաններ ստեղծելու համար կարևորում են քննադատական մտածողության ձևավորումը պատմության դասերին:

Գերհազեցած մեր ժամանակը հատուկ պահանջներ է դնում կրթության և, իհարկե, ուսուցչի առաջ: Պատմության դասերին սովորողները ևս պատրաստակամորեն են մասնակցում վերլուծություններ պահանջող առաջադրանքների կատարմանը և ընդունակ են դրսևորել որոշումներ կայացնելու կարողության բարդ մակարդակ: Չ՞ե որ գիտելիքն արժեքավոր է, երբ այն կիրառելի է և ընկալված է հիմնավորապես: Քննադատական մտածողությունը ուսուցման համակարգում վերջին տարիներին լայն տարածում է գտել, միաժամանակ այն հին պատմական արմատներ ունի: Հայտնի են Սոկրատեսի առաջարկած հարցադրումների մեթոդը, Պլուտարքոսի և Մ.Ֆ. Քվինթիլիանոսի զարգացրած մոտեցումն, ըստ որի՝

*Աշակերտը ոչ թե սափոր է, որ պետք է լցնել գիտելիքներով, այլ ջահ է, որը պետք է վառել:*

Իմ հետազոտության նպատակն է՝ քննադատական մտածողության զարգացմամբ սովորողների մոտ հասնել հետևյալ արդյունքների.

1. Մովորողների բարձր մոտիվացիա ուսումնական գործընթացին:
2. Մովորողների մտավոր կարողությունների բարձրացում, մտածողության ճկունություն:
3. Տեղեկատվությունը ուրիշներին փոխանցելու, դրանք ուղղելու, այլ անձի տեսակետը հասկանալու և ընդունելու ունակության զարգացում:
4. Ստացված տեղեկատվությունը վերլուծելու կարողության զարգացում:

## ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՈՒՂՂՎԱԾ

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ:

Քննադատական մտածողություն (անգլ.՝ *critical thinking*) ապացուցումների համակարգ, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները: Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկության հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները: Կա կարծիք, որ անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայմանն է:

Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են զլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

- կանխորոշում են ուսումնառության նպատակները,
- հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման,
- նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,
- նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,
- ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ,
- զարգացնում են պրոբլեմի լուծման ակտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը:

Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի՝ նախքան վերջնական եզրահանգումները: Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը: Քննադատական մտածողության զարգացման մեջ մեծ ավանդ ունեն մի շարք ամերիկյան մանկավարժներ

Ջինի Լ. Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը, Չարլզ Թեմփլը և այլոք: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Այս բառը ներառում է քննել և դատել բառ-հասկացությունները: Ռոբերտ Էննիսը, ով քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը քննադատական մտածողությունը սահմանում է, որպես «ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել»:

Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել: Ուստի գնահատականը պետք է լինի կառուցողական՝ արտահայտելով և՛ դրական և՛ բացասական վերաբերմունք:

Քննադատական մտածողությունը անվանում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը: Անհատի քննադատաբար մտածելու կարողությունը դա խնդիրները և ենթադրությունները վերհանելու, կարևոր հարաբերակցությունները ճանաչելու ճիշտ եզրակացություններ անելու, փաստերը գնահատելու և եզրահանգումներ կատարելու հմտությունն է:

Քննադատական մտածողության տեխնոլոգիան ձևավորվել անցյալ դարի վերջին տասնամյակներին և միտված է սովորողների ճանաչողական ակտիվության, ինքնուրույնության ու ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը (Перемена", 2001): Քննադատական մտածողության տեխնոլոգիան մշակվել է Բաց Հասարակության Ինստիտուտի Հայաստանյան օժանդակության հիմնադրամի «Քայլ առ քայլ» ծրագրի սեամաններում և առավելապես հայտնի է որպես «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» վերապատրաստման դասընթաց: Այն հայտնի է նաև որպես նույն հիմնադրամի դրամաշնորհի միջոցով ՀՊՄՀ-ում մշակված «Քննադատական մտածողության կիրառման հնարավորությունները կրտսեր դպրոցում» հատուկ սեմինար-դասընթաց: (Վարդույան Ս., Երիցյան Ֆ., Պետրոսյան Ռ., 2002):

Քննադատական մտածողության տեխնոլոգիան հնարավորություն է տալիս մանկավարժական գործընթացը դարձնել առավել ակտիվ, սովորողների նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերել, հաշվի առնել սովորողների հետաքրքրություններն ու նախասիրությունները՝ աշակերտների պասիվ դերը փոխարինելով առավել ակտիվ՝

սուբյեկտի դերով: Քննադատական մտածողության տեխնոլոգիան փոխկապակցված է պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի հետ, որի կիրառման ժամանակ սովորողները գիտելիքը ձեռք են բերում պրոբլեմային իրավիճակի լուծման շնորհիվ, ինքնուրույն որոնողական, հետազոտական աշխատանքի արդյունքում: Քննադատական մտածողության տեխնոլոգիան կապված է նաև կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիայի հետ, քանի որ երկու տեխնոլոգիաների կիրառման դեպքում էլ սովորողների մոտ ձևավորվում են այնպիսի որակներ, ինչպիսիքն են՝ համատեղ աշխատելու, իրար լսելու, դիմացինի կարծիքը հաշվի առնելու կարողություն, կարծիքների բախումները կանխելու ու ընդհանուր հայտարարի գալու կարողություններ՝ նպաստելով սովորողների ակտիվ մասնակցությանը ուսուցման ողջ գործընթացին:

Այսպես, քննադատական մտածողության տեխնոլոգիան ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա է, որը միավորել ու իր մեջ է ամփոփել վերը նշված մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետ, արդիական ու նշանակալի կողմերը՝ դառնալով առավել ընդգրկուն ու ժամանակի պահանջներին համահունչ:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառության ժամանակ ի տարբերություն ավանդական ուսուցման, սովորողները ուսուցման օբյեկտից՝ գիտելիքներ մտապահողներից ու վերարտադրողներից, վեր են ածվում ուսուցման սուբյեկտի՝ ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցների ինքնուրույն որոշումներ կայացնողների, համապատասխան եզրահանգումներ, դատողություններ անողների, նորը ստեղծողների:

Ամփոփելով կարող ենք նշել, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան կարելի է դիտարկել որպես ակտիվ մանկավարժական տեխնոլոգիա (9, էջ 243-246), քանի որ այս տեխնոլոգիայի կիրառման ժամանակ սովորողները չեն կարող մնալ պասիվ դերում և ակամա դառնում են ուսուցման գործընթացի ակտիվ մասնակիցները, ինչը նպաստում է սովորողների ակտիվության և ինքնուրույնության ապահովմանը, աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների ու կարողությունների, ստեղծագործական մտածողության, որոնողական ու հետազոտական, հաղորդակցական ու համագործակցային կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև ներքին հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը:

Քննադատական մտածողության էությունն այն է, որ ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվի սովորողի ուսումնական աշխատանք կազմակերպողի: Սովորողը ինքնուրույն որոնողական աշխատանքի արդյունքում ինքն է ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքները: Ինչպես գիտենք քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հատուկ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում, կշռադատում: Խթանման փուլը առավելապես իրականացվում է մոտիվացիոն և հաղորդակցական գործառնություններ: Երկրորդ՝ իմաստի ընկալման փուլի հիմնական գործառնություններն են տեղեկատվականը և համակարգողը: Իսկ երրորդը կշռադատման փուլն ուղղված է գնահատման և արժևորման գործառնությունների իրականացմանը (5, էջ 13-23): Մեթոդների ընտրությամբ էր պայմանավորված խմբային քննարկման արդյունավետությունը, քանի որ ընտրված մեթոդների հիմքում ընկած էր զուգահեռ մտածելու հայեցակարգը:

**ՔՆՆԱԴՏԱՍԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՄԻՆ:**

Ժամանակակից մանկավարժության կարևոր խնդիրներից է սովորողների ինքնուրույնության ու ակտիվության ստեղծագործական մտածողության զարգացումը, ինքնադրսևորման մղումը, սեփական հնհարավորությունների, ներուժի բացահայտումը և այլն:

Անհատական մոտեցում ցուցաբերելով ամեն մի աշակերտի՝ այսօր մանկավարժությունը սովորողներին հնարավորություն է ընձեռնում դրսևորել սուբյեկտիվություն, որ դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասիվ ունկնդրողի դերը վերափոխվի ակտիվ մասնակցի դերով: Արդի մանկավարժությունը, թվարկված ու բազմաթիվ այլ կարևոր խնդիրների լուծման նպատակով գտնվում է ուսուցման նորանոր մոտեցումների, մեթոդների ու հնարների, մանկավարժական բազմաթիվ տեխնոլոգիաների որոնման ու մշակման գործընթացում: Գիտնականները նշում են, որ կրթությունը կարող է զարգացնել սովորողի քննադատական մտածողությունը: Մի շարք հետազոտությունների արդյունքում ապացուցվել է, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել քննադատական



մտածողություն: Քննադատական մտածողությունը մի գործընթաց է, որի հիմքը դրվում է դպրոցում աստիճանաբար, ուսումնառության յուրաքանչյուր փուլում: Դրա հիմնական նպատակն է ակտիվացնել ուսումնական գործընթացը: Քննադատական մտածողության զարգացումը կարևորվում է հանրակրթության բոլոր աստիճաններում, ընդամին յուրաքանչյուր աստիճանում ունի իր խնդիրները, բովանդակությունը, մեթոդները, միջոցները, տեխնոլոգիաները, աշխատանքի կազմակերպման ձևերը: Ավագ դպրոցական տարիքում քննադատական մտածողության զարգացումն առավել է կարևորվում. պատանեկության կենսափուլում առաջնային են դառնում կենսական խոր բովանդակությամբ հարցադրումները, մասնագիտական կողմնորոշումները, աշխարհի նկատմամբ գնահատողական վերաբերմունքը, ինքնահաստատման, ինքնադրսևորման, ճանաչողական գործունեության նոր ձևերի տիրապետման պահանջումները, որոնք պահանջում են քննադատական մտածողության զարգացման անհրաժեշտություն: Ուսումնական գործընթացում կարելի է առանձնացնել քննադատական մտածողության զարգացման հետևյալ գործոնները՝

- ✓ դրդապատճառային՝ հետաքրքրությունն ուսումնասիրվող նյութի նկատմամբ,
- ✓ կազմակերպչական-մեթոդական՝ աշխատանքի կազմակերպման ձևերը, մեթոդները, միջոցները, եղանակները, դասավանդողի մասնագիտական կոմպետենցիաները,
- ✓ տեղեկատվական՝ տպագիր և էլեկտրոնային աղբյուրների մատչելիությունը, հասանելիությունը, դրանցով աշխատելու կարողությունների զարգացումը,
- ✓ հաղորդակցական՝ փոխներգործուն միջավայրի ձևավորումը,
- ✓ ռեֆլեքսիվ-գնահատողական՝ իր և այլ անձանց տեսակետների համարժեք գնահատումը, հետահայաց անդրադարձն ու վերլուծությունը: Քննադատական մտածողության զարգացման գործընթացի արդյունավետությունն ապահովում են մանկավարժական մի շարք պայմաններ՝
- ✓ ուսումնական նյութի պրոբլեմային բնույթն ու տեղեկատվական հագեցվածությունը. հնարավոր է քննարկել, ապացուցել, փաստարկել այն նյութը, որը հիմնված է կոնկրետ փաստերի, տվյալների, աղբյուրների վրա,

- ✓ տեղեկույթի գիտականությունը, արժանահավաստությունը, արդիականությունը, սոցիալական նշանակությունը, այսինքն՝ ուսումնական նյութում կենսական հիմնախնդիրների, սոցիալական նշանակություն ունեցող հարցերի արտացոլումը,
- ✓ ուսումնական տեղեկույթի, թեմայի հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրության արթնացումը, ուսումնական դրդապատճառների ձևավորվածությունը եթե սովորողը ցանկանում է իմանալ, ըմբռնել, իմաստավորել, խորանալ նյութի բովանդակության մեջ, ապա նա ստեղծագործական վերաբերմունք է դրսևորում, փորձում է տեղեկատվական տարբեր աղբյուրներից քաղել լրացուցիչ տեղեկույթ, համեմատել, համադրել, եզրահանգումներ անել,
- ✓ կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում քննադատական մտածողությունը նպաստող բաղադրիչի կարևորումը,
- ✓ կրթական գործընթացի հաղորդակցական բնույթը, ինտերակտիվ միջավայրի ձևավորումը. քննադատական մտածողությունը զարգանում է բանավեճի, քննարկումների արդյունքում: Կարևոր է, որ սովորողներն ազատ, առանց սխալվելու վախի արտահայտեն իրենց տեսակետը հանդուրժողականության և փոխըմբռնման մթնոլորտում: Այս առումով ուշագրավ է Դ. Կլուստերի այն դիտարկումը, որ քննադատական մտածողությունը սոցիալական բնույթ ունեցող մտածողություն է. ցանկացած միտք ստուգվում և հղկվում է, երբ քննարկվում է ուրիշների հետ,
- ✓ խմբային և անհատական աշխատանքների արդյունավետ համադրումը,

խմբային աշխատանքի խրախուսումը. աշխատանքը փոքր խմբերում թույլ կտա առավել վստահ լինել ու նեղ շրջանակում արտահայտել կարծիքը. խմբային տեսակետում կհամադրվեն խմբի անդամների անհատական տեսակետները, իսկ տվյալ աշակերտը ձեռք կբերի համարձակություն և կունենա վստահության զգացում:

Ավագ դպրոցում սովորողների քննադատական մտածողության զարգացման համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները, աշխատանքի ձևերը՝

- ✓ աշխատանքում, ուսումնական և կենսական իրավիճակներում, գործնականում սովորողներին մղել ուսումնական նյութի շուրջ կանխատեսելու, մեկնաբանելու, ապացուցելու, իր բառերով արտահայտելու, վերլուծելու, համադրելու, համեմատելու, ժխտելու, հիմնավորելու, փաստարկելու,

պատճառահետևանքային կապերը գտնելու, արժևորելու, փաստերի հիման վրա եզրահանգելու, հարցեր ձևակերպելու և այլն,

- ✓ տարբեր թեմաներին նվիրված էսսեները, գիտական, գիտահանրամատչելի նյութերի վերաբերյալ կարծիքները, համառոտ և ընդարձակ գրախոսությունները,
- ✓ երկրում, տարածաշրջանում քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, կրթական, մարզամշակութային հարցերի վերաբերյալ քննարկումները, խոսքի՝ համապատասխան ոճին բնորոշ լեզվաքերականական միջոցներով համարժեք ձևակերպումները,
- ✓ գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի, հեռուստահաղորդումների, սոցիալական հոլովակների, արդիական թեմաների վերաբերյալ համացանցային նյութերի քննարկումները, այդ նյութերի արժանահավատության ստուգումը տարբեր աղբյուրներով, գրքի, ֆիլմի կերպարի կամ կերպարների, վերջաբանի, գործողությունների, զարգացումների, բախումների լուծման, վերջաբանի վերաբերյալ գրավոր և բանավոր կարծիքը, արտահայտված կարծիքի քննարկումը, մեկնաբանումը, հիմնավորումը,
- ✓ տեքստի առանցքային գաղափարի առանձնացումը, վերլուծությունը, ընդհանրացումը, կենսական իրավիճակներից կամ անձնային փորձից վերցված օրինակներով մեկնաբանումը, ստեղծագործաբար զարգացումը, կանխատեսումը, անդրադարձը, ընդ որում՝ այդ աշխատանքը կարող է կրել բազմազան բնույթ՝ քննադատական կարծիք, վերլուծություն, հավանություն, հերքում, ներկայացում, գնահատում, հիմնավորում, ապացուցում,
- ✓ միևնույն հիմնախնդրի՝ տարբեր տեսանկյուններից մեկնաբանումը (ստույգ փաստեր, հուզական-գնահատողական մոտեցում, դրական կողմերի, զարգացման հեռանկարների նախանշում, առաջարկություններ, լուծումներ), իր և ուրիշների կարծիքների համեմատումը, հակադրումը, համադրումը, զուգահեռների անցկացումը, անհատական կարծիքների հիման վրա խմբային կարծիքի ձևավորումը, եզրահանգումը, անհատական և խմբային մակարդակում արժևորումը, արտահայտված տեսակետների ընդհանրացումը,

- ✓ միտումնավոր սխալներով, փաստերի խեղաթյուրմամբ շարադրանքի հանձնարարում, որպեսզի սովորողներն ինքնուրույն գտնեն սխալները, շտկեն, հիմնավորեն,
- ✓ բանավեճերը տեղեկույթի քննադատական վերլուծության, փաստարկումների և ապացույցների հիման վրա ձևավորում են տեսակետն արտահայտելու կարողություն,
- ✓ միևնույն թեմայի վերաբերյալ պատմողական, նկարագրական, դատողական շարադրանքները, ուսումնահետազոտական նախագծերը, խմբային քննարկումները, քեյսերը, դերախաղերն ու գործնական խաղերը, գիտագործնական կոնֆերանսները, առցանց ֆորումները: Ակտիվ քննարկումների արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում է աշխարհայացք, որը դուրս է նախապաշարմունքներից, ինքնուրույն վերաբերմունք է այս կամ այն երևույթների համար հանդեպ:

Սովորողների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում, որպես ներգործության միջոց՝ առանձնացվում է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը: Այն կօգնի բացահայտել պատմական փաստերի ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ:

Բանալի բառեր, ինֆորմացիա, քննադատական ստեղծագործական մտածողություն, պատճառահետևանքային կապ, վերլուծություն, բաց հարցեր, գնահատում, ճանաչողություն:

Նախևառաջ մեզ հետաքրքրում էր այն հարցը, թե հնարավո՞ր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները:

Ըստ այդմ՝ դիտարկվել են Դայանա Հալփերնի, Արթուր Չամփանի (Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթության ինստիտուտի պատմության մասնագետ), Լեբների և այլոց մոտեցումները: Մասնագետների մոտեցումների նպատակն է առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու,

փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում:

Առաջադրված վարկածն է՝ բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնասիրությունը կարող է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության որոշակի փոխանցելի հմտություններ: Սովորողների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց տվեցին, որ շատ բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում սովորողներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ:

Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ սովորողին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ:

Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողություններն: Վերջիններս համարվում են «Պատմական մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ: Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝  
Ինչու՞, ի՞նչ հետևանքների է հանգեցնում, ինչպե՞ս էք գնահատում...

Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ:

Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ

հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից:

Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն է տալիս սովորողին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը:

Այս առումով շատ մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել երեխաների մտածողության զարգացմանը:

Պետք է ստեղծվի համապատասխան կրթական միջավայր, որտեղ սովորողը չի խուսափում սեփական տեսակետն արտահայտելուց, պատրաստ է լսելու-ընդունել կարծիքներ, որոնք կարող են և չհամընկնել իր տեսակետի հետ:

Այս դեպքում սովորողի խնդիրն է փաստարկված դատողությունների միջոցով ապացուցել իր իրավացիությունը կամ, ընդունելով դիմացինի փաստարկները, փոփոխություններ կատարել իր դիրքորոշման մեջ գնահատելով տարբեր փաստեր ու երևույթներ՝ աշակերտը քայլ առ քայլ սովորում է գնահատել իր գործունեությունը: Այսպիսով պատմության դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել ՔՄ հմտություններ: Այդ նպատակով նախնորելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ:

Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, գուգահեռների որոնման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս անել հիմնավորված եզրակացություններ, իսկ գնահատելիս լինել շրջահայաց:

Մեր օրերում հավասար կարևորություն ունեն գիտելիքը, հմտությունները և կարողությունները: Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման խնդիրը խիստ բազմաշերտ է:

Այստեղ կարևոր են առարկայական ծրագրերը, դասավանդման մեթոդները, ուսուցչի ուղղորդիչ դերը, գրականության մատչելիությունը դասընթացի տևողությունը, և անկասկած շատ կարևոր է, թե որքանով է ուսուցիչը անձամբ տիրապետում քննադատական մտածողությունը:

Կրթական բարեփոխումների համատեքստում այսօր շեշտը դրվում է թե՛ կրթության թե՛ ինքնակրթության, ինքնագարգացման ու ինքնակատարելագործման վրա: Ուստի դպրոցը պետք է կարողանա դառնա սովորողների ինքնագարգացող, ինքնակատարելագործվող համայնք, ինչը կնպաստի երեխաների զարգացնող կրթության համար համապատասխան միջավայրի ստեղծմանը: Աշակերտը աշխատում է լայն տեղեկատվական դաշտում, արդյունքում խթանվում է սովորողների ինքնուրույն քննադատական, ստեղծագործական մտածողությունը:

### **ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՄԻ ՆՄՈՒՇ ՕՐԻՆԱԿ**

Հիմք ընդունելով քննադատական մտածողության դասավանդման ուղղությամբ իրականացված հետազոտական փորձը գալիս ենք փաստելու, որ քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում, կշռադատում: Խթանման փուլը առավելապես իրականացնում է մոտիվացիոն և հաղորդակցական գործառույթներ, երկրորդ՝ իմաստի ընկալման փուլի հիմնական գործառույթներն են տեղեկատվականը և համակարգողը, իսկ երրորդ՝ կշռադատման փուլն ուղղված է գնահատման և արժեվորման գործառույթների իրականացմանը [5, էջ 13-23]: Յուրաքանչյուր փուլում կիրառել ենք մեթոդներ ըստ իրենց կիրառման նպատակի և գործառույթի:

Խթանման փուլում կիրառել են «Մտագրոհ» վեր հանելով նախնական գիտելիքները:

Իմաստավորման փուլում՝ «Մտածողության 6 գլխարկներ» մեթոդը, որոնք հնարավորություն են տալիս ակտիվորեն աշխատել տեղեկատվության հետ՝ ձևավորելով նոր գիտելիք ստեղծելու, իմաստավորված հարցեր առաջադրելու ու վերլուծելու, համագործակցելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու կարողություններ: Կշռադատման փուլում կիրառել ենք Էվրիստիկ գրույց մեթոդը, որը

հնարավորություն է տալիս ստացած տեղեկատվությունը համակարգելու և որոշելու դրա կարևորությունն ու տեղը գիտելիքների համակարգում:



## ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկան՝ Հայոց պատմություն

Ուսուցիչ՝ Նունե Հարությունյան

Դասարան՝ IXդ

Թեմա՝ ՀՀ ամրապնդման գործընթացը

Դասի տիպը՝ Նոր նյութի ուսումնասիրում

Մեթոդներ՝ «ԽԻԿ» «Մտածողության վեց գլխարկները» «Էվրիստիկ զրույց»

Տևողությունը՝ 45ր.

Դասի նպատակը՝ ձևավորել քննական վերլուծական մտածողություն, ճիշտ նպատակներ առաջ քաշելու, կոնկրետ խնդիրներ լուծելու, ինքնուրույն մտածելու կարողություն:

Դասի ավարտի սովորողները կիմանան՝

- Համակողմանի տեղեկություններ ստանա պետականության կայացման գործընթացի վերաբերյալ ինչպես նաև պետականաշինության, բանակաշինության ընթացքի, արդյունքների վերաբերյալ:

Կկարողանան՝

- Գնահատել անկախության հռչակագրի ընդունումը, անկախության հռչակումը, ինչպես նաև պետականության կայացման ճանապարհին ունեցած դժվարությունները:
- Պարզաբանել՝ 1990թ. օգոստոսի 23-ի «Անկախության հռչակագիրը» 1991թ-ի սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեն և սեպտեմբերի 23-ին գերագույն խորհրդի կողմից ՀՀ անկախության հռչակումը:
- Բնութագրել՝ ՀՀ խորհրդանիշների բովանդակությունը:
- Ձևավորել՝ պետականության և պետության նկատմամբ վստահություն՝ հայրենաճանաչության և հայրենապաշտության գաղափարների ամբողջացման և ամրապնդման միջոցով:
- Արժևորել՝ Պետականության դերն ու նշանակությունը որպես հայ ժողովրդի հաստատման գլխավոր նախապայման:

Դասի սկիզբը՝ աշակերտների ուշադրության կենտրոնացում/խթանում/ - հետաքրքրությունների ստեղծում, ծանոթացում դասանյութին, խնդիրներին, նպատակներին:

Կազմակերպել մտազրոհ վեր հանելով սովորողների նախնական գիտելիքները:  
Դասի ընթացք՝ ուսուցանվել նյութի բովանդակության ուսումնասիրում և հետազոտում:

Դասարանը բաժանել 6 խմբի և յուրաքանչյուր խմբին տալ մեկ գույնի գլխարկ:  
Գլխարկի գույնը որոշում է խմբի անդամների մտածողության ուղղությունը:  
Յուրաքանչյուր գույն կապված է իր նշանակության հետ: Սպիտակ գլխարկը անաչառ և  
օբյեկտիվ է: Այս գույնը բացառում է կարծիքներ, կասկածներ, գնահատականներ  
/քննադատություն/: Հեռացնում է զգացմունքները և զգացումները: Այսինքն պետք է  
ապացուցել, թե ինչու ամեն ինչ ընթացավ այսպես, այլ ոչ թե այլ կերպ [4, էջ 58-82]:

Կարմիր գույնը խորհրդանշում է բարկություն, զայրույթ և ներքին լարվածություն:  
Այստեղ հույզեր են, զգացմունքներ, ինտուիցիա, տպավորություններ:

Սովորողները կիսվում են էմոցիաներով (վախ, հիացմունք, ուրախություն և այլն),  
որոնք առաջանում են այս կամ այն լուծումների կամ առաջարկության մասին մտածելու  
պահին: Բոլոր որոշումները զգացմունքային են, առանց պատճառաբանելու և  
հիմնավորելու [4, էջ 83-107]: Սև գույնը մռայլ է նեգատիվ: Այս խումբը պետք է հայտնի  
կասկած, գտնի հակափաստարկներ[4, էջ 108-143]: Դեղին գույնը արևի գույնն է: Դեղին  
գլխարկը պոզիտիվ է: Այս խումբը փորձում է բացահայտել թաքնված դրական  
ռեսուրսները [4, էջ 144-170]:

Կանաչ գլխարկը խորհրդանշում է նոր գաղափարների ստեղծագործական սկիզբը  
և ծաղկունք: Այս խմբի անդամները առաջարկում են նոր գաղափարներ,  
հասկացություններ, այլընտրանքներ [4, էջ 171-208]:

Կապույտ գլխարկը կապված է մտային գործընթացի կազմակերպման և  
ղեկավարման հետ: Այս խմբի անդամները գնահատում են բոլոր խմբերի առաջարկները  
և գտնում օպտիմալ լուծում [4, էջ 209-233]: Այսինքն սահմանվում է նպատակների  
ձևակերպում.

Վեր են հանվում անկախության կերտման հիմնական օղակները,  
պետականության հաստատման գործընթացի փուլերն ու օրինաչափությունները,  
քննարկվում են ՀՀ անկախության հռչակագրի դրույթները, վերլուծվում են նրա  
հիմնարար սկզբունքները: Խմբերի աշխատանքի համար տրվում է ժամանակ և  
հրահանգ:

Այնուհետև խմբերը ներկայացնում են իրենց տեսակետները, վերլուծությունն ու դիրքորոշումը: Բոլոր գլխարկների ներկայացրած աշխատանքից հետո ունենում ենք փաստեր, հակափաստեր, կարծիքներ, հույզեր, լուծումներ:

Ամփոփում – արդյունքների վերլուծություն, հետադարձ կապի ապահովում, հետագա անելիքների հստակեցում: Անց է կացվում էվրիստիկ գրույց, որի միջոցով ամբողջացվում են սովորողների ձեռք բերած գիտելիքները: Միաժամանակ վերստին կարևորել ՀՀ պետականության հաստատումը, ազգային բանակի կազմավորումը, համազգային միասնության արդյունքում հաղթանակի ապահովումը:

Տնային աշխատանք - հանձնարարվում է ուսումնասիրել դասընթացը /դաս 32/, օգտվելով սկզբնաղբյուրներից գեկուցումներ պատրաստել ըստ թեմաների.

- ՀՀ անկախության հռչակումը:
- Սահմանադրության ընդունումը
- Ազգ բանակը՝ պետության ամրապնդման գրավականը:

Որպես գնահատման գործիք կարելի է օգտագործել գնահատման ռուբրիկը յուրաքանչյուր խմբի համար:

**ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌՈՒԲՐԻԿ**

Չափանիշ						
Լրացումներ անելը, հիմնավորելը կամ հերքելը						
Մեփական դիրքորոշում հայտնելը						
Քննարկումը որակապես նոր մակարդակի բարձրացնելը						
Պասիվ մասնակցին քննարկման մեջ ներքաշելը						
Կարգապահ լինելը						
Համագործակցելը						

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրեթե բոլոր ականավոր հեղինակները համակարծիք են, որ քննադատական մտածողության ձեւավորմանը միանշանակ նպաստում է դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառումը: Երբ սովորողը ակտիվորեն մասնակցում է ուսումնառության գործընթացին, նա ակամա սկսում է մտածել խնդրի շուրջ, ուսուցչից բացի լսում է իր համադասարանցիների կարծիքը եւ տալիս է իր պատճառաբանված համաձայնությունը կամ անհամաձայնությունը բարձրաձայնված կարծիքների վերաբերյալ: Ինչպես նաեւ կարող է ներկայացնել ամբողջովին տարբերվող տեսակետ:

Դիտարկելով սովորողներին՝ ես եկել եմ այն եզրակացության, որ այսօր դասին բավարար չէ պատրաստի տեղեկատվություն տալ պատմական գործընթացի, հասարակության զարգացման մասին, պետք է սովորեցնել, թե ինչպես ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, զարգացնել ճանաչողական մտիվացիա, ստեղծագործական և մտածողական անհատականություն:

Ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ սովորողները ոչ միայն մտապահեն նյութը, այլև դրա հիման վրա կարողանան ընդհանրացնել, համեմատել փաստերը, մեկնաբանել և կատարել եզրակացություններ: Այսպիսով այն սկզբունքով կառուցված դասը, որ ուսուցիչը տալիս է գիտելիք, իսկ սովորողը պարզապես վերցնում է այն, ներկայումս չի կարող բավարարել բոլոր ժամանակակից պահանջները: Սովորողը պետք է կարողանա գտնել առաջադրված հարցերի պատասխանները: Քննադատական մտածողության ձևավորումը լավագույնն է նման խնդիրների լուծման համար: Քննադատական մտածողությունը նպաստող հմտությունների զարգացումը կարելուորում է ժողովրդավարական հասարակության ձեւավորման եւ ժողովրդական արժեքների պահպանման տեսանկյունից:

Այն հասարակությունը, որն ունակ է մտածելու, խնդիրը բազմակողմանիորեն վերլուծելու, հանդիսանում է պետության զարգացման հիմնական շարժիչ ուժը:

ՀՀ կառավարությունը հայտարարել է, որ կրթության միջոցով նպատակ ունի ձևավորել գիտելիքահեն տնտեսություն, իսկ նման տնտեսություն հնարավոր է ստեղծել ինքնուրույն և անկախ մտածող, նորարարական մտեցումներ ունեցող, համակարգային մտածողություն ունեցող մասնագետների միջոցով:

Քննադատական մտածողությունը այն մեկ ընդհանուր անվանումն է, որով կարելի է բնորոշել ինքնուրույն, անկախ, համակարգային և նորարական մտածողությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. П. Саргсян, «ПЕДАГОГИЧЕСКОЕ ПРИЗВАНИЕ» - 2023 Сборник статей Международного профессионально-исследовательского конкурса, состоявшегося 22 марта 2023 г. в г. Петрозаводске
2. Գ.Ն. Հարությունյան «Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մեթոդաբանական գործընթացի արդյունավետության բարձրացմանը» «Մանկավարժություն»/ գիտամեթոդական վերլուծական ամսագիր/ ,№6, 2012թ. էջ 28-33
3. Ա. Թոփուզյա, Գ. Հարությունյան, «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներն ու մեթոդները կրթության հեռանկարների համատեքստում» // Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, Երևան 2022 № 2, էջ 139-151
4. Հակոբյան Գրետա «Ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացումն ուսումնական գործընթացում» 2019թ. էջ 114-119